

Արձանագրություն հ.4

ԵՊՀ ՏԿՖ գիտխորհրդի 15.06.15 թ. կայացած նիստի

Ներկա էին խորհրդի 29 անդամներից 24-ը:

Օրակարգում՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստացիա:
2. Պաշտոնների տեղակալման մրցույթ:
3. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց ամբիոնների առկա ուսուցմամբ ասպիրանտների մեկ տարվա կատարած աշխատանքի արդյունքների մասին տեղեկատվություն, ինչպես նաև ամբիոնի եզրակացությունը:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին /ասպիրանտուրա ուղարկվող քաղվածքները՝ համապատասխան թղթապանակում տպած վիճակում/:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ դոց. Հ. Մնացականյանը: Նա ներկայացրեց տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի տեղի համար հայտարարված մրցութի մասնակից Միքայել Վարազդատի Միքայելյանի անձնական գործի տվյալները և մրցութային հանձնաժողովի եզրակացությունն այն մասին, որ նրա թեկնածությունը երաշխավորվում է մասնակցելու ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

Արտահայտվեցին՝

Հ.Լ.Սարգսյան: Մ.Միքայելյանը ընտրվում է 2-րդ անգամ, նա արդեն կայացել է որպես ամբիոնի վարիչ, մինչ այդ նա ունեցել է պետական համակարգում աշխատանքի փորձ: Ամբիոնում այժմ կան ամբիոնի համախմբմանը միտված ծրագրեր, սակայն ամբիոնն ունի դասավանդման և դասագրքաստեղծման խնդիրներ: Ամբիոնը գրեթե միաձայն, մեկ դեմով նրան երաշխավորել է մասնակցելու գիտխորհրդի քննարկմանը:

Գ.Ա.Ղարիբյան: Ամբիոնում անցավ սկզբունքային քննարկում և միաձայն երաշխավորվեց գիտխորհրդի քննարկմանը: Ա մբիոնի վարիչի 1-ին ընտրության ժամանակես նախընթացությունը տվել էմ Թ.Մանասերյանին, իսկ Մ.Միքայելյանին դեմ էմ քվեարկել և նաև բարձրաձայնել էմ, սակայն Միքայելյանը իր վարիչության տարիներին հիշաչարություն չցուցաբերեց , այլ ընդհակառակը անչափ ուշադիր վերաբերմունքի էմ արժանացել, որի համար իմ խորին շնորհակալությունն էմ հայտնում նրան: Ես կարծում էմ պետք է երաշխավորել նրան մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Թ.Թ.Թորոսյան Պարոն Միքայելյանին ճանաչում էմ 30 տարուց ավելի, իսկ վերջին 5 տարիների մասին ասեմ , որ պ-ն Միքայելյանը կարողացել է դրականորեն դրսևորել իրեն և շահել ուսանողների համակրանքը: Երկրորդ պահը, որ կուզենայի նշել, դա կադրային խնդիրն է. ամբիոնում 5 տարվա ընթացքում թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել ամբիոնի աշխատակիցները: Նաև կայանում է մագիստրոսական ծրագրի ընդունելությունը: Ինձ դուր է գալիս Միքայելյանի սկզբունքայնությունը;Ես կարծում էմ, որ կարելի է երաշխավորել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Ա.Խ.Մարկոսյան հարգարժան Հ.Լևոնի, ներկաներ, պ-ն Միքայելյանին ճանաչում էմ 1975 թվականից: Ուզում էմ ընդգծել ամբիոնի կարևորությունը, տնտեսագիտության տեսությունը հստակեցնում է հասկացությունները: Մյուսը այն է, որ այդ 5 տարիները անցան հոգուտ Միքայելյանի, նա չափազանց սկզբունքային է, չափազանց ազնիվ է , նա նաև լավ ընկեր է: Ես ևս միանում էմ ելույթ ունեցողներին և կողմ էմ քվեարկում պարոն Միքայելյանին:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վ.Աբրահամյան /նախագահ/, Լ.Խաչատրյան, Ռ. Ալավերդյան:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ.Աբրահամյանի զեկուցումը քվեարկության արդյունքների վերաբերյալ; քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 29 անդամներից նիստին ներկա գտնվող 23-ը, բաժանվել է 23 քվեաթերթ, կողմ են քվեարկել 21-ը, դեմ՝ 2-ը, անվավեր քվեաթերթեր չկան:

Որոշեցին՝

Հաստատել ԵՊՀ ՏԿՖ գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Վարազդատի Միքայելյանին համարել ընտրված „Տնտեսագիտության տեսության.. ամբիոնի վարիչի պաշտոնում:

Նկատի ունենալով ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշումը և գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները դիմել համալսարանի գիտխորհրդին տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Վարազդատի Միքայելյանին հաստատելու տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսության», ամբիոնի վարիչի պաշտոնում:

Գիտխորհրդի նախահահ՝
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ.Լ.Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղար՝
Տ.գ.թ., դոցենտ

Ա.Հ.Համբարձումյան